1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ*

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

1. Վիճահարույց հիմնախնդիրներ

Քննարկվող իրադարձությունների պատմական նշանակությունն ու դասերը լուսաբանելու, որոշակի եզրակացությունների հանգելու համար առաջին հերթին պետք է ունենալ մի քանի կարևոր հիմնախնդիրների դիտական, ենթաշուտ պատասխանները. ինչպիսի՞ առանձնահատուկ, ճակատագրական տեղ է գրավում 1918 թվականի առաջին կեսը հայ ժողովրդի պատմության մեջ, ո՞րն էր հարձակվող թուրքերի հիմնական նպատակը՝ միայն Հայաստանը նվաճումը, թե նաև ամբողջ հայության ցեղասպանության ավարտը, ինչո՞ւ անհուսալի թվացող դժոխային իրավիճակում հայ ժողովուրդը 1918 թ. մայիսին կարողացավ փայլուն հաղթանակ տանել, իսկ 1920 թ. սեպտեմբեր—նոյեմբերին հայոց 40 հազարանոց զինված, հանդերձավորված բանակը պարտվեց, որոնք էին դրա պատճառները, Մայիսյան հերոսամարտերը իրո՞ք տարերային բնույթ ունեին, ինչպես ընդունված է գրել, թե ընդհակառակը դրանք ունեին պետական, զինվորական ու կուսակցական ընդհանուր ղեկավարություն և ընթանում էին այդ ղեկավարության կողմից մշակված հստակ ծրագրերով։ Եթե թուրքերի դեմ մղվող օրհասական պայքարը ընդհանուր ղեկավարություն է ունեցել, ապա ո՞վ է եղել այդ պայքարի կազմակերպիչն ու ղեկավարը։ այդ իրադարձությունների մեջ ինչ դեր է ունեցել ՀՀ Դաշնակցությունը։ Եվ վերջապես, ինչո՞ւ կործանվեց հայոց նորաստեղծ Հանրապետությունը՝ երկրի ղեկավարության թույլ տված սխալների՞, թե դրա հետ չառընչվող արտաքին ուժերի՝ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի հակահայկական գործարքի պատճառով, որոնց զինված ուժերի ճնշման տակ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին հայոց ոչետականությունը դադարեց գոյություն ունենալուց։

Այս օրերին, երբ ամբողջ հայ ժողովուրդը հանդիսավոր պայմաններում նշում է 80 տարի առաջ տեղի ունեցած պատմական իրադարձությունների՝ 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության հռչակման իրոք պատմական հոբելյանը, ամբողջ հայ ժողովուրդը և առաջին հերթին նորից վերածնված Հայաստանի ներկա հանրապետությունը պետք է դասեր քաղեն անցյալի պատմությունից, մշակեն ազգային գաղափարախոսության՝ ավանդական գործոնների վրա հենված արդի մոդելը, ազգային անվտանգության կոնցեպցիան, որպեսզի կարողանան ապահովել հայ ժողովրդի գոյատևումը, հայոց անկախ պետականությունը դայիք բոլոր դեռերում։

Հիշյալ հիմնախնդիրները վերլուծելիս պետք է ոչ թե պատմական իրողություններն ու վավերագրերը հարմարեցնել նուստիցական ու քաղաքական տեսություններին, ինչպես սովորաբար որ արվում է, այլ ընդհակառակը,

---

* Զեկուցում՝ կարդացված ՀՀ ԳԱԱ Նախագահության և Պատմության ինստիտուտի՝ Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսական մարտերի 80-ամյակին նվիրված հոբելյանական սիմոտական նստաշրջանում, 1998 թ. մայիսի 22-ին։

պատմագիտական տեսակետները բխեցնել պատմական իրադարձությունների և արժանահավատ փաստաթղթերի օբյեկտիվ, գիտական ուսումնասիրությունից։

2. Թուրքիայի հիմնական նպատակն է եղել Արևելյան Հայաստանի նվաճումը և արևելահայության ցեղասպանությունը

1918 թվականը ճակատագրական տարի էր հայ ժողովրդի համար։ Թուրքիան իրագործելով արևմտահայերի ցեղասպանությունը և օգտվելով այն հանգամանքից, որ ռուսական զորքերը հեռացել են Կովկասյան ռազմաճակատից, 1918 թ. հունվարի վերջին, խախտելով Երզնկայի զինադադարը, արշավանք է սկսում դեպի Անդրկովկաս՝ նպատակ ունենալով բնաջնջել նաև արևելահայությանը, վերացնել հայկական «սեպը» և պայմաններ ստեղծել պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման, Մեծ Թուրանի թյուրքական պետության ստեղծման համար։

Թուրքական զորքերը կարճ ժամանակահատվածում, գրեթե առանց դիմադրության, վերանվաճում են Արևմտյան Հայաստանը, Կարսի մարզը, ներխուժում Արևելյան Հայաստան և մայիսի 21-ին գրավում Սարդարապատը՝ անմիջական վտանգ ստեղծելով Երևանի համար։ Թուրքական զորամասերի արշավանքն ուղեկցվում էր հայ բնակչության զանգվածային կոտորածներով և փախուստով դեպի դեռևս թշնամու կողմից չնվաճված շրջանները։ Թուրքական զորքերը առաջ էին շարժվում մի քանի ուղղությամբ։ Իրենց հիմնական խնդիրը կատարելուց հետո այդ զորամասերը պետք է միանային և շարժվեին դեպի Բաքու՝ Ադրբեջանում խորհրդային իշխանությունը տապալելու համար։ Երիտթուրքերը, մուսաֆաթականները, ինչպես նաև ադրբեջանցի կոմունիստները՝ Ն. Նարիմանովի ղեկավարությամբ Բաքվի կոմունան դիտում էին որպես հայերի կամ էլ հայամետ իշխանություն։ Եվ պատահական չէ, որ ինչպես Ադրբեջանի առաջին, այնպես էլ ներկա հանրապետության ղեկավարությունը 1918 թվականի մարտյան քաղաքացիական կռիվները դիտում են որպես ադրբեջանցիների ցեղասպանություն։

Այսպիսով, 1918 թ. մայիսին նորից օրակարգ մտավ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը։ Հայերը, որոնք հնկայական տարածքներ՝ ամբողջ Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը, գրեթե առանց կռվի, թողել էին թշնամուն, այլևս նահանջելու տեղ չունեին։ Նրանք կամ պետք է օրհասական կռվի դուրս գային՝ թշնամուն հաղթելու վճռականությամբ, կամ էլ մասամբ ցեղասպանության ենթարկվելով՝ հեռանային արտերկիր, լքելով պատմական Հայրենիքի վերջին անկյունը՝ Արևելյան Հայաստանը։

Այդ առումով, վստահորեն կարելի է ասել, որ հայոց բազմադարյան պատմության մեջ նման ճակատագրական իրավիճակ ստեղծվում էր երկրորդ անգամ։ Բախտորոշ պայքար էր գնում հայ ժողովրդի և հայոց անկախ հայրենիքի գոյապահպանման համար։ Դարերի ընթացքում հայ ժողովուրդը դեռևս ձեռքին պայքարել էր իր անկախության կամ էլ օտարի լծից ազատվելու համար։ Իսկ այժմ պայքարում էր իր ֆիզիկական գոյությունն ապահովելու համար։ Պարտության դեպքում հայերը կորցնում էին ապրելու իրավունքը, նրանք ցեղասպանության էին ենթարկվում, հաղթանակի դեպքում՝ ձեռք էին բերում ոչ միայն գոյատևման, այլև անկախ պետականություն ունենալու իրավունք։

Այլընտրանք չկար։ Հայ ժողովուրդը դնաց վերջին ու վճռական դոտեմարտի՝ մահ կամ ազատություն կարգախոսով։ Եվ կատարվեց անխուսափելի հրաշքը։ Հայ ժողովուրդը շահեց ճակատագրական ճակատամարտը, պատմական հաղթանակ տարավ։ Մայիսի 28-ին, որպես Մայիսյան հերոսամարտերում տարած փառապանծ հաղթանակների արդյունք, հռչակվեց Հայաստանի Անկախ Հանրապետությունը։

3. Պրոբլեմի ուսումնասիրության վիճակը կոմունիստական կուսակցության տիրապետության տարիներին

Առաջ գնալու համար անհրաժեշտ է ճշտորեն գնահատել անցյալի իրադարձությունները, նրանց պատմական նշանակությունը և դրանցից բխող ազգային առաջնահերթ խնդիրներն ու դասերը։

1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության պատմական նշանակությունը և դասերը բացահայտելու համար, որպես հիմնական պայման, մենք պետք է ունենայինք հիշյալ պատմական իրադարձությունների բազմակողմանի մշակված գիտական պատմությունը։

Սակայն, ցավոք, ինչպես Մայիսյան հերոսամարտերի, այնպես էլ Հայաստանի Առաջին Հանրապետության պատմությունն ի սկզբանե մտել են կուսակցական շահարկումների ոլորտ, որի հետևանքով այդ կարևորագույն պատմական իրադարձությունների պատմությունը խեղաթյուրվել է, կեղծվել և ծուռ հայելու մեջ ներկայացվել հայ ժողովրդին և ամբողջ աշխարհին։

Խորհրդային իշխանության տարիներին, շուրջ 70 տարի, այդ պատմությունը կեղծվել է խորհրդային պատմաբանների կողմից, որը հանդիսանում էր իշխանության ղեկի մոտ գտնվող բոլշևիկյան կուսակցության՝ դաշնակցության և նացիոնալիզմի դեմ մղվող գաղափարական պայքարի բաղկացուցիչ մասը։ Ընդ որում, խորհրդային տարիներին, մինչև Ստալինի մահը և ԽՄԿԿ 20-րդ համագումարը ընդհանրապես արգելված էր գրել Մայիսյան հերոսամարտերի մասին, իսկ Հայաստանի Հանրապետության ժամանակաշրջանը մենագրություններում և դասագրքերում իր տեղն էր գտնում՝ «Բոլշևիկների պայքարը դաշնակցականների հակաժողովրդական քաղաքականության դեմ 1918—1920 թվականներին» վերնագրով կամ էլ նույնատիպ այլ տարբերակներով։

ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո, քաղաքական «ձնհալի» պայմաններում որոշ հնարավորություններ ստեղծվեցին այդ արգելված հիմնախնդիրների ինչ-որ չափով բարձրացման համար։ Մեծ դժվարությամբ, բազմաթիվ խոչընդոտների հաղթահարմամբ սկսեցին գրքեր ու հոդվածներ հրատարակվել Մայիսյան հերոսամարտերի մասին։ Սակայն այդ ուսումնասիրություններում, ժամանակի պայմաններից ելնելով, իսկ որոշ դեպքերում էլ քաղաքական համոզմունքներից, հեղինակները շարունակում էին մերժել Դաշնակցության դերը Մայիսյան հերոսամարտերում։ իսկ շատ դեպքերում էլ խրստորեն քննադատում տվյալ ժամանակահատվածում այդ կուսակցության վարած քաղաքականությունը։ Հասկանալի է, որ նման մոտեցումով գրված ուսումնասիրությունները (առաջին հերթին նկատի ունեմ Հ. Թուրշյանի «Մարդարապատի հերոսամարտը» աշխատությունը), մի կողմից, տվյալ պայմաններում համարվելով խիզախություն, անկասկած իրենցից ներկայացնելով որոշակի գիտական արժեք, պրոբլեմի գիտական ուսումնասիրության սկիզբ, մյուս կողմից, այնուամենայնիվ չեն կարող հիմք հանդիսանալ այդ պատմական իրադարձության նշանակության և դասերի լիարժեք և բազմակողմանի բնութագրման համար։

Եթե Մայիսյան հերոսամարտերի մասին այդ նոր փուլում կարելի եղավ արտահայտել կիսաճշմարտություններ, ապա ցավոք Հայաստանի Հանրապետության պատմության ուսումնասիրության գործում լուրջ տեղաշարժեր չկատարվեցին։ Հիմնականում ուժի մեջ մնացին նախկին արատավոր, հակագիտական տեսակետները։ Դաշնակցության վարկաբեկման նպատակով սևացվում էր 1918—1920 թթ. ամբողջ պատմությունը, բոլոր անհաջողությունները վերագրվում էին այդ կուսակցությանը, իսկ հաջողությունները Մայիսյան հերոսամարտերի ժամանակ Արամ Մանուկյանի անձին և ժողովրդին, իսկ Հանրապետության տարիներին՝ առանձին անձանց և ոչ թե պետությանը։ Հայաստանի Հանրապետության, հայոց պետականության կործանումը, որը տվյալ ժամանակահատվածի ամենախոշոր պրոբլեմն է, միա-

նշանակորեն բնութագրվում էր որպես իշխանության ղեկի մոտ գտնվող ՀՀ Դաշնակցության սխալ քաղաքականության արդյունք։

Ի հակադրություն բոլշևիկյան պատմագրության, Դաշնակցությունն էլ սույն հիմնախնդիրների մասին ստեղծեց իր կուսակցական պատմագրությունը, որն ավելի մոտ լինելով ճշմարտությանը, այնուամենայնիվ, կուսակցական պատմագիտություն էր՝ իր վարած քաղաքականությունը անսխալ տեսնելու միտումով, որը ևս անընդունելի է և չի կարող հանգեցնել սպառիչ գիտական եզրահանգումների։

2. Պրոբլեմի ուսումնասիրության վիճակը Հայոց համազգային շարժում կուսակցության տիրապետության շրջանում

1991 թվականին խորհրդային կայսրությունը փլուզվեց։ Ժողովրդական հանրաքվեի արդյունքների հիման վրա նույն թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն։

Թվում էր, թե անկախ ազգային պետության ստեղծմամբ վերացվելու էին քաղաքական կապանքները, և ազգային գաղափարախոսության հիմքերի վրա Հայոց պատմագիտությունը՝ ձերբազատվելով կոմունիստական գաղափարախոսության կապանքներից, ազատ զարգացում կապրի և կհասնի մեծ հաջողություններ։ Սակայն այդ հույսերը չիրականացան։ 1994 թվականի դեկտեմբերի 28-ին Դաշնակցության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում դադարեցվեց։ Բանտերը՝ կեղծ մեղադրանքների հիման վրա, որոնք հիշեցնում էին 1937 թվականը, լցվեցին դաշնակցության անդամներով։ Հայաստանում Դաշնակցության դեմ սկսվեցին քաղաքական դատավարություններ։

Պատմագիտությունը ՀՀ Նախագահի կողմից բնութագրվեց որպես կեղծ գիտություն, իսկ ազգային գաղափարախոսությունը՝ «կեղծ քաղաքական կատեգորիա»։ Սկսվեց հայոց պատմությունը Հայոց համազգային շարժում ապազգային կուսակցության գաղափարախոսության տեսանկյունից վերարժեքավորելու շրջանը։ Սակայն ՀՀՇ-ն այդ բնագավառում նոր բան չստեղծեց և չէր էլ կարող ստեղծել։ Ըստ էության ՀՀՇ-ն որպես պետական գաղափարախոսության բաղկացուցիչ մաս ուժի մեջ թողեց բոլշևիկյան հակադաշնակցական պատմագիտության տեսակետները։ Իշխանության և իշխանամետ թերթերը հեղեղվեցին Դաշնակցության դեմ և Դաշնակցության գործունեության հետ առնչվող պատմական իրադարձությունների մասին գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող, շատ հաճախ զրպարտչական բնույթ կրող հոդվածներով և Սփյուռքում հակադաշնակցական ուժերի կողմից տասնամյակների ընթացքում ստեղծված հակադաշնակցական գրականությունից արտատպումներով։ Հայաստանի Հանրապետության ՀՀՇ-ական ղեկավարությունը գրեթե առանց փոփոխությունների շարունակեց խորհրդային Հայաստանի բոլշևիկյան ղեկավարության հակադաշնակցական, հակագիտական քաղաքականությունը պատմագիտության բնագավառում։ Եթե 1918 թ. առաջին կեսի պատմության լուսաբանման հարցերում որոշ ձեռքբերումներ եղան՝ նկատի ունեմ Հ. Ավետիսյանի «Հայկական հարցը 1918 թվականին» աշխատությունը, ապա Հայաստանի Հանրապետության պատմության լուսաբանության գործում փոփոխություններ չկատարվեցին։ Այս փուլում ամենամեծ հարվածը հասավ Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրությանը։ Քանզի ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը և ՀՀՇ-ն, Դաշնակցությանը վարկաբեկելու գրդապատճառներից ելնելով, նպատակ էին հետապնդում ցանկացած խաբեության դիմելով ժողովրդին ցույց տալ, որ Հայաստանի Առաջին Հանրապետությունը կործանվել է այդ կուսակցության սխալ քաղաքականության պատճառով։ Այդ հակադաշնակցական քարոզչությունը՝ կատարվում էր ՀՀՇ-ին հատուկ խիստ դիլետանտական մակարդակով։ Պատմաբանները տարօրինակ կերպով լռեցին։

Ստեղծված բարենպաստ պայմաններում սկսում էր աստիճանաբար վերակենդանանալ բոլշևիկյան հակադաշնակցական պատմագրությունը, որը ըստ մեզ, բնութագրվում է որպես ներբոլշևիկյան պատմագրություն: Բոլշևիկյան կուսակցության պատմության կողմից մերժված տեսակետները վերակենդանանում են և փորձում տեղ գտնել ազգային պատմագրության շրջանակներում: Հասկանալի է, խոսքը տվյալ դեպքում չի վերաբերում կոմկուսի դպրոցական պատմագրությանը:

Հանուն ճշմարտության պետք է նշել նաև, որ անցած ծանր տարիներին փորձառու գիտնականների կողմից ընդդիմադիր մամուլում հրատարակված հոդվածներում և առանձին ուսումնասիրություններում պաշտպանվել են քննարկվող սյուժեների մասին գիտական տեսակետները և խստորեն քննադատվել Հայոց համազգային շարժում կուսակցության և նրա լիդեր Լ. Տեր-Պետրոսյանի ապազգային գաղափարախոսությունը՝ պատմագիտությունն անգավառում:

Հասկանալի է, սակայն, որ նման ապազգային իշխանությունները չէին կարող երկար գոյատևել: 1998 թվականի փետրվարի սկզբներին ՀՀՇԿ-ն և նրա լիդեր Լ.Տեր-Պետրոսյանը հեռացվեցին իշխանությունից և նետվեցին պատմության աղբարկղը: Իշխանության գլուխ եկան ազգային ուժերը, որով և պայմաններ ստեղծվեցին քննարկվող հիմնախնդիրների ուսումնասիրությունը կուսակցական շահարկումների ոլորտից հանելու, ազգային պատմագրություն ստեղծելու համար:

5. 1918 թվականի առաջին կեսին Հայաստանն ունեցել է պետական-քաղաքական ընդհանուր ղեկավարություն

Այժմ համառոտակի անդրադառնանք երկու վիճելի հիմնախնդիրների, որոնց լուծումը չունենալով՝ մենք, ես կարծում եմ, չենք կարողանա ներկայացնել ոչ Մայիսյան հերոսամարտերի և ոչ էլ Հայաստանի Հանրապետության ամբողջական պատմության պատմական նշանակությունը և դրանից բխող պատմական դասերը:

Հիմնախնդիր առաջին. Մայիսյան հերոսամարտերը իրո՞ք եղել են տարբերային և չեն ունեցել պետական, ազգային-կուսակցական ընդհանուր ղեկավարություն:

Դաշնակցությունը 1917 թ. նոյեմբերին տեղի ունեցած Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ ստացավ 560 հազար ձայն, և հայ իրականության մեջ անմրցակից, տիրապետող դիրք էր գրավում: 1917 թ. հոկտեմբերին ստեղծված արևելահայ ազգային խորհուրդը, որը պետականության սաղմն էր և պետականության դեր էր կատարում, փաստորեն իրականացնում էր Դաշնակցության քաղաքականությունը: 15 հոգուց բաղկացած այդ խորհրդում, երբ մյուս կուսակցությունները ներկայացված էին մեկ-երկու հոգով, 3 հոգի անկուսակցականներ էին, Դաշնակցությունն ուներ 6 անդամ: Խորհրդի նախագահը դաշնակցական էր: Ավելի վաղ, 1917 թ. մայիսին ստեղծված արևմտահայ խորհրդում ևս մեծամասնություն էին կազմում դաշնակցականները: Խորհրդի 15 անդամներից 8-ը դաշնակցականներ էին, մնացած 7-ը՝ այլ քաղաքական կուսակցություններից:

Պատմական փաստաթղթերը ցույց են տալիս, որ դեռևս 1917 թ. վերջերից, երբ ռուսական բանակը լքում էր Կովկասյան ճակատը և թուրքական վտանգը նորից հայ ժողովրդի համար օրակարգի հարց էր դառնում, արևելահայ և արևմտահայ ազգային խորհուրդները ՀՀ Դաշնակցության ղեկավարությամբ հսկայածավալ աշխատանքներ էին ծավալել՝ զորահավաքի կազմակերպման, հայոց բանակի ստեղծման, թուրքական ուժերին դիմակայելու, Հայրենիքը փրկելու ուղղությամբ: 1917 թ. հոկտեմբերին արևելահայերի ազգային խորհուրդը Արամ Մանուկյանին ուղարկեց Երևան՝ իբրև լիազոր-ներկայացուցիչ: Դեկտեմբերին Երևանում ստեղծված ազգային խորհուրդը, որը ևս պետական մարմնի դեր էր ստանձնել, ղեկավարվում էր Արամ

Մանուկյանի կողմից։ Նույն ամսին Հայոց ազգային խորհրդի կարգադրությամբ ստեղծվում է Երևանի ազգային և զինվորական խորհուրդների միացյալ հատուկ կոմիտե, որի առաջ խնդիր է դրվում՝ ոտքի կանգնեցնել հայ ժողովրդին, հավաքել հայ զինվորներին և ստեղծել հայկական կորպուս։ Այդ միացյալ կոմիտեն ևս ղեկավարում էր Դաշնակցությունը ներկայացնող Արամ Մանուկյանը։

Հատուկ կոմիտեի հենց առաջին կոչում ասված էր. «Հայրենակիցներ, Հայրենիքը վտանգված է։ Այսօր սպառնալիքի ու ոչնչացման անդունդի ծայրին է կանգնած ոչ միայն մոխրակույտերով զարդարուն Թուրքահայաստանը, այլև կովկասահայ ժողովուրդը և ընդհանրապես մեր դեղեցիկ Կովկասը։ Արհավիրքը ծավալվում է շտապկոտ արագությամբ, ուստի ժամանակը չի սպասում, օրը տարվա չափ արժեք ունի։ Ամեն ոք պիտի լցվի զարտականությամբ գիտակցությամբ և կանգնի իր դիրքի վրա։ Այս է պահանջում հայ ժողովրդի հավաքական կամքը, այս է պահանջում պատմական ժամը։ Ազգային խորհուրդը որոշել է կանգ չառնել ոչ նյութական և ոչ էլ բարոյական զոհողության առաջ։ Բոլոր հայաբնակ գավառները հասարակական գործիչներ ու զինվորական լիազորներ են ուղարկված՝ հայ զինվորներ հավաքելու համար»։ Ելնելով վտանգի մեծությունից, Հատուկ կոմիտեն իր կոչն ուղղել էր ոչ միայն հայ զինվորներին, այլև ամբողջ հայ ժողովրդին։ Կոչում այդ մասին ասվում էր. «Հայեր, կոչն ամենքիդ ենք ուղղում։ Ամենքը պիտի ոտքի ելնեն՝ զինվոր դառնալու համար կամ զինվորի դժվարին բեռը թեթևացնելու համար, ամենքը պիտի իրենց մասնակցության բաժինը երևան հանեն, ծեր ու երիտասարդը, հարուստն ու աղքատը, տղամարդն ու կինը, ամենքը, ամենքը...»։

Կոչի տակ ստորագրված է՝ Երևանի հայոց ազգային ու զինվորական խորհուրդների Հատուկ կոմիտե։ Կոչը տպագրված թերթիկի ձևով տարածվել է Հայաստանի տարածքում։ Նույն դեկտեմբեր ամսին Հատուկ կոմիտեն տարածում է մի կոչ ևս, որով նա դիմում էր ուսուցիչներին, բժիշկներին, փաստաբաններին, ինժեներներին և ընդհանրապես հայ բոլոր մտավորականներին, ինչպես նաև ուսանողներին ու աշակերտներին, ընդգծելով, որ «այսօր կրկին ձեր դռներն է բախում հայ ժողովրդի բախտը»։ Կարճ ժամանակում Արամին հաջողվեց իր շուրջը համախմբել հասարակական-քաղաքական բոլոր ուժերին և ստեղծել պատկառելի զինվորական ուժ։

Պահպանված բազմաթիվ փաստաթղթեր, որոնց տակ կա Արամ Մանուկյանի ստորագրությունը, որպես Հայոց ազգային խորհրդի լիազոր ներկայացուցիչի, ցույց են տալիս, որ թուրքական զորքերին ռազմական դիմակայության կազմակերպումը ղեկավարում էր Արամ Մանուկյանը։ Շատ փաստաթղթերում նրա անվան դիմաց կրճատ գրված է՝ Երևանի Հատուկ լիազոր։

1918 թվականի մարտին ժողովրդի պահանջով Արամ Մանուկյանը հրաշակվում է «դիկտատոր»՝ իր ձեռքում կենտրոնացնելով ամբողջ իշխանությունը։ Մարտի 28-ին, երբ թուրքական զորքերը արագորեն շարժվում էին դեպի Արևելյան Հայաստանի խորքերը, այդ ճակատագրական պահին նա կոչով դիմում է հայ ժողովրդին՝ թշնամու դեմ կռվելու համար ուժեր մոբիլիզացնելու մասին։ Կոչում ասված էր. «Պատերազմական գործողությունների դժբախտ ընթացքը ցնցեց ամբողջ հայությունը։ Նամանավանդ հայության սիրտը կաղմող Երևանը։ Ստեղծված կացության տպավորությունների տակ Երևանի հայ ժողովուրդը, զինվորականությունը, հրամանատարությունն ու սպայությունը հարկ համարեցին արտակարգ լիազորություններ տալ ինձ՝ ճակատն ուժեղացնելու, ներքին անլիշխանությունները սանձելու և առհասարակ մեր ներքին ու արտաքին կռիվներին՝ վճռական ու կտրուկ միջոցներով արագ ընթացք տալու։

Ստանձնելով այդ պատասխանատու պարտականությունը ճգնաժամային այս ծանր օրերին, ես հրապարակով հայտարարում եմ բարձրաձայն, որ գոյություն ունեցող բոլոր մարմինները՝ Ազգային խորհուրդ, ճակատի բարձրագույն հրամանատարություն, պետական հիմնարկություններ, կան ու մնալու են իրենց դերի ու դիրքի մեջ։

իմ անելիքը պետք է լինի՝ մի կողմից արագացնել աշխատանքը և մյուս կողմից՝ ամեն մի մարմնի և գործող ուժերի դնել իր վայելուչ դերի մեջ և հաստատել զինվորական օրինակելի կարգապահություն»:

Այսպիսով, պատմության այս ճակատագրական պահին հայոց ինքնապահպանման բնազդը, որը ազգային գաղափարախոսության առանցքն է, գտավ հիմնախնդրի ճիշտ լուծումը և «դիկտատորի» իրավունքներ տվեց ՀՀ Դաշնակցության փայլուն լիդերներից մեկին՝ Արամ Մանուկյանին: Այսինքն, հայոց աշխարհի վերջին, դեռևս ազատ անկյունում հաստատվեց ռազմական դիկտատուրա: Յուրաքանչյուր պատմական պահ առաջ է քաշում իր առաջնորդին, 1918 թվականի առաջին կեսին ժողովրդի պահանջով նման դեր էր ստանձնել Արամ Մանուկյանը:

1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի ժամանակ ցեղասպանություն բերող թուրքական զորքերի դեմ կենաց ու մահվան կռվի էր դուրս եկել ամբողջ հայ ժողովուրդը՝ արևելահայությունը, այնտեղ կենտրոնացված արևմտահայությունը, կովկասահայությունը և անգամ ինչ-որ չափով սփյուռքահայությունը: Այդ ժողովրդական պատերազմը տարերային չէր: Կռվող ուժերի միջուկը հայոց բանակն էր: Պատերազմը ուներ իր զինվորական ղեկավարությունը, որի մշակած պլաններով էլ գործում էր հայոց բանակը, կռվող ամբողջ ուժը: Սակայն այդ վճռորոշ պահին հայոց հայրենիքը ուներ նաև իր պետական, ազգային-կուսակցական ընդհանուր ղեկավարությունը՝ հանձին ազգային խորհրդի: «դիկտատոր» Արամ Մանուկյանի և ՀՀ Դաշնակցության: Փաստորեն հաստատվել էր ոչ թե Արամ Մանուկյան անձի, այլ Դաշնակցության դիկտատուրան, որն անվիճելի տիրապետող դիրք ուներ հայ ժողովրդի մեջ և որպես դրա հետևանք նաև արևելահայ ու արևմտահայ ազգային խորհուրդներում: Ի վերջո, անհեթեթություն է կուսակցության լիդերին կուսակցությունից անջատելը, իսկ վերջինս էլ ազգային խորհուրդներից:

Պատմական իրողության դեմ մեղանչում են, կուսակցական շահարկումներին տուրք են տալիս բոլոր նրանք, ովքեր փորձում են Արամ Մանուկյանին անջատել Դաշնակցությունից և ժխտել այդ կուսակցության առանցքային դերը Մայիսյան հերոսամարտերում:

6. Հայաստանի Առաջին Հանրապետությունը ռուս-թուրքական գործարքի զոհն է

Հիմնախնդիր երկրորդ. երկրորդ կարևորագույն հիմնախնդիրը, որը քննարկվող թեմայի կապակցությամբ անհրաժեշտ է բարձրացնել, կայանում է հետևյալում. ինչո՞ւ կործանվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ Դաշնակցության թույլ տված սխալների՞, ինչպես պնդում են հակադաշնակցական ուժերի գաղափարախոսները և պատմագետները, թե՞ պարզապես քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի հակահայկական գործարքի զոհը դարձավ Հայաստանը:

Ես նպատակ չունեմ մեղադրելու ոչ մեկին, շատ նյութեր ժամանակին շրջանառության մեջ չեն գտնվել, արխիվներում անհրաժեշտ նյութերը գիտնականներին չեն տրվել: Սակայն այսօր, երբ արխիվները բացվել են և մեր տրամադրության տակ են գտնվում այդ թեման բացահայտելու համար դրեթե բոլոր անհրաժեշտ նյութերը, որոնց մի մասը հրատարակվել է, հակագիտական կլինի և պատմական իրողության հետ ոչ մի առնչություն չի ունենա Հանրապետության կործանումը Դաշնակցությանը վերագրելը: Որոնք են այդ տեսակետը հիմնավորող նյութերը: Փաստաթղթերը շատ են, մի զեկուցման մեջ հնարավոր չէ ներկայացնել բոլոր հայտնի նյութերը, բավարարվենք մի քանիսի բովանդակության շարադրմամբ:

1. Մուստաֆա Քեմալը 1920 թ. ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կողմից դիմում է Լենինին՝ առաջարկելով Ադրբեջանը Ռուսաստանին զոհաբերելու գնով ստանալ Հայաստանի ճակատագիրը տնօրինելու իրավունքը: Կարծեք թե ի պատասխան այդ նամակի, Ստալինը 1920 թ. հուլիսի

8-ին Օրջոնիկիձեին հեռագրում է. «Իմ կարծիքն այն է, որ չի կարելի անվերջ լարախաղացություն անել կողմերի միջև, պետք է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, ներկա դեպքում իհարկե, Ադրբեջանին, Թուրքիայի հետ միասին»։

Այդ շրջանում վարվող քաղաքականության մասին Օրջոնիկիձեն քիչ ավելի ուշ գրել է. «Այն պահից, երբ խորհրդային իշխանությունը հաստատվեց Ադրբեջանում, այդ հանրապետությունը մեզ համար ելակետ դարձավ, որտեղից մենք հարձակվում էինք մենշևիկների, դաշնակցականների, բուրժուական, ազգայնա-հակահեղափոխական կառավարությունների վրա»։

Այդ նշանակում է, որ Ռուսաստանը համաձայն էր բավարարելու Թուրքիայի և Ադրբեջանի տարածքային պահանջները Հայաստանից։ Ճիշտ է, Ռուսաստանը և Թուրքիան ունեին մասնակի տարածքային վեճեր, սակայն միջազգային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի անհրաժեշտությունը և համաշխարհային սոցիալիստական հեղափոխության կեղծ տեսության իրականացումը այդ երկու պետություններին տարավ դեպի հակահայկական գործարքի կնքում։ Սա ժամանակի պայմաններից բխող տակտիկական քայլ էր, որովհետև ստրատեգիական առումով Թուրքիան և Ռուսաստանը հավերժ թշնամիներ են, և այդ հանգամանքն է հանդիսանում հայերի ռուսական կողմնորոշման հիմքը։ Ի վերջո, Ռուսաստանը այդ շրջանում պայքարում էր ցարական կայսրության տարածքային ամբողջականությունն ապահովելու համար, իսկ Թուրքիան՝ Օսմանյան կայսրության կորցրած տարածքները հետ ստանալու։

2. Փաստաթղթերի երկրորդ խումբը վերաբերում է Բեքիր Սամիի մոսկվյան պատվիրակության նյութերին, որոնք մանրամասն ներկայացված են թուրքական պատմագիտական և պատմավավերագրական գրքերում և հիմնավորվում են Ռուսաստանի արխիվներում գտնվող կուսակցական, պետական բնույթի պաշտոնական փաստաթղթերով։ Օգոստոսի երկրորդ կեսին Բեքիր Սամիի պատվիրակությունը, դժգոհ լինելով Չիչերինից, հանդիպում է ունենում Լենինի հետ, որի մոտ բարձրացվում է հետևյալ հարցը. 1920 թ. օգոստոսի 10-ի ռուս-հայկական համաձայնագրում սխալ է թույլ տրվել, երկաթուղու Շահթախտ—Սարիղամիշ հատվածը թողնվել է Հայաստանի սահմաններում, որի պատճառով կտրվել է Ռուսաստանի և Թուրքիայի անմիջական կապը։ Առաջարկվում է այդ սխալը ուղղել։ Լենինը թուրքական պատվիրակությանը պատասխանել է. «Մենք հասկացել ենք, որ սխալվել ենք այդ հարցում։ Այդ դուք ինքներդ ուղղեք»։ Այդ նշանակում էր, որ Թուրքիան Ռուսաստանի համաձայնությունն է ստանում Հայաստանի վրա հարձակում սկսելու մասին։ Օրջոնիկիձեն դեմ էր այդ տեսակետին և գտնում էր, որ եթե այդ շրջանը պետք է հայերից վերցվի, ապա ճիշտ կլինի, որ դա իրականացնի ոչ թե Թուրքիան, այլ Ռուսաստանը։ Երկար քննարկումներից հետո Օրջոնիկիձեի տեսակետը չընդունվեց։

Թուրքական պատվիրակության անդամ Յուսուֆ Քեմալը շտապ մեկնեց Թուրքիա Ռուսաստանի տեսակետը Քեմալին հայտնելու համար. նա Տրապիզոն ժամանեց սեպտեմբերի 18-ին և, ինչպես հայտնի է, ունենալով Լենինի համաձայնությունը, թուրքերը մի քանի օր հետո հարձակվեցին Հայաստանի վրա։

3. Հայաստանի Հանրապետության դեմ Թուրքիան և Ադրբեջանը գործում էին կոորդինացված ծրագրով։ Սեպտեմբերի 17-ին Բաքվում գործող Արևելքի ժողովուրդների խորհրդի նախագահության «Արևելքի ժողովուրդների քարոզչական ու գործողության խորհուրդը», որը փաստորեն ղեկավարվում էր Օրջոնիկիձեի և Նարիմանովի կողմից, ընդունում է 3-րդ Ինտերնացիոնալի գործադիր կոմիտեի նախագահությանը և ՌԿԿ Կենտկոմին ուղղված մի փաստաթուղթ, որտեղ պահանջվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Հայաստանի Հանրապետությունը զոհաբերել Թուրքիային։ Մոսկվայի առաջ հարց էր բարձրացվում՝ թույլ տալ Թուրքիային հարձակվել դաշնակցական

Հայաստանի վրա։ ոչնչացնել հայոց պետականությունը և դրանով իսկ աջակցել մարող ազատագրական շարժմանը Թուրքիայում։

4. Փաստաթղթերի 4-րդ խումբը՝ թուրքական և ռուսական, վկայում է, որ Ռուսաստանը և Թուրքիան ավելի ուշ՝ սեպտեմբերին, պայմանավորվածություն են ունեցել Հայաստանի վրա միաժամանակ հարձակվելու մասին։ Սակայն Ռուսաստանը իր խոստումը չի կատարել, նպատակահարմար գտնելով Հայաստան զորք մտցնել միայն այն դեպքում, երբ Թուրքերը ծնկի կբերեն հայերին և իրենք կկարողանան Հայաստան մտնել որպես «հայ ժողովրդի ազատարարներ»։ Այդ քաղաքականությունը հետևողականորեն իրականացվեց Ռուսաստանի կողմից։

5. 1920 թ. սեպտեմբերի վերջերին թուրքական զորքերը հարձակվում են Հայաստանի վրա։ Հայկական բանակը չկարողացավ դիմակայել թուրքերի հարձակմանը։ Նորից օրակարգի մեջ մտավ հայոց ցեղասպանության և հայ պետականության կործանման խնդիրը։ Լեգրանը, տեղյակ չլինելով Մոսկվայի որոշման մասին, տագնապալից հեռագրերի մի շարք է հղում Ռուսաստանի ղեկավարությանը։ Մի քանի օրվա լռությունից հետո, երբ պարզ դարձավ, որ թուրքերը նպատակ են դրել գրավել Հայաստանը, հոկտեմբերի 5-ին Չիչերինը հեռագրում է ՌԿԿ Քաղբյուրոյին. «Թուրքերի հետ պայմանավորվածություն է եղել, որ մեզ հետ անհրաժեշտ կոնտակտի համար նրանք կգրավեն Սարիղամիշ—Նահիջևան գիծը՝ մեզանից անկախ և առանց որևէ կապ մեզ հետ... Պայմանավորվածություն կար, որ թուրքերը Սարիղամիշ—Շահթախտ գծից առաջ չեն գնա։ Սակայն Օրջոնիկիձեից ստացված վերջին տեղյակների համաձայն, նրանք շարժվում են դեպի Կարս և կարծես թե սկսում են ավելի լուրջ հարձակում»։

Չիչերինը նույն փաստաթղթում միաժամանակ հայտնում է. «Օրջոնիկիձեն նշում է, որ եթե թուրքերը շարունակեն շարժվել դեպի Հայաստանի խորքերը, ապա իրենք հարկադրված կլինեն հայերին առաջարկել մեր զորքերով գրավել իրենց ամբողջ երկիրը՝ կոտորածները կանխելու համար»։

Նոյեմբերի 3-ին, երբ թուրքական զորքերը մեծ հաջողություններ ձեռքբերելով առաջ էին շարժվում, Ստալինը հեռագրում է Չիչերինին. «Թուրքերի հարձակման մասին լուրերը չափազանցված են... Ահա թե ինչու, այդ լուրերին պետք է վերաբերվել հանգիստ»։ Ստալինը բնականաբար հանգիստ էր։ Դեպքերը զարգանում էին մշակված պլանի համաձայն։ Բաքվում զուգահեռաբար մշակվում էր Հայաստան ռուսական զորք մտցնելու ծրագիրը։ Բայց դրա համար անհրաժեշտ էր, որ Հայաստանի վիճակը այնքան ծանրանար, որ Հայաստանի ղեկավարությունը հարկադրված լիներ դիմել Ռուսաստանի զինված օգնությանը։ Այդ պատճառով էլ Ռուսաստանը թուրքերի հարձակումը կանգնեցնելու համար ոչ մի միջոց ձեռք չառավ։

ՌԿԿ Քաղբյուրոն այդ ժամանակ արդեն մշակած ուներ Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության մասին մի ամբողջական ծրագիր, որը բաղկացած էր մինիմում և մաքսիմում նպատակներից։ Մաքսիմում նպատակը՝ Հայաստան զորք մտցնելն էր, Հայաստանի խորհրդայնացումը։ Բնականաբար, ՌԿԿ Կենտկոմը պայքարում էր Մաքսիմում ծրագրի իրականացման համար։

Նոյեմբերի 29-ին, երբ հայկական բանակը արդեն պարտվել էր և ռուսական բանակը կարգադրություն էր ստացել մտնել Հայաստան, Ստալինը հեռագրում է Լեգրանին և Մդիվանուն. «Շտապել պետք չէ, անհրաժեշտ է սպասել համալրման։ Թուրքերի հետ դաշնակների համար կռվել պետք չէ, բայց թուրքերին ամեն ինչ զիջելն էլ թույլատրելի չէ. անհրաժեշտ է թուրքերից հետ ստանալ Ալեքսանդրապոլը Հայաստանի համար՝ առայժմ առկախ թողնելով Կարսի հարցը»։

Հայաստանի պետականության ճակատագիրը որոշված էր։ Հեռագիրը տալու պահին ռուսական զորքերը արդեն մտել էին Հայաստանի տարածք։ Դեկտեմբերի 2-ին Երևանում Հայաստանի Հանրապետության ղեկավարու-

թյունը հարկադրված էր ստորագրել ռուս-հայկական համաձայնագիրը, որով Հայաստանի Հանրապետությունը դադարեցրեց իր գոյությունը՝ Հայաստանը խորհրդայնացվեց և մտավ Ռուսաստանի կազմի մեջ։

Բերված նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության կործանումը Դաշնակցության սխալ քաղաքականության արդյունք համարելը լուրջ չէ։ Հայոց պետականությունը դարձել է ռուս-թուրքական գործարքի զոհը։

7. Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության պատմական նշանակությունն ու դասերը

Ընդհանուր գծերով պատկերացում տալով քննարկվող հիմնախնդիրների ուսումնասիրության մասին, այժմ տեսնենք, թե որոնք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության պատմական նշանակությունն ու դասը։

1. 1918 թ. մայիսին օրակարգում էր դրված հայ ժողովրդի լինել-չլինելու, իր Հայրենիքի մի փոքր անկյունում՝ Արևելյան Հայաստանում ապրելու, գոյատևելու խնդիրը։

Հայ ժողովուրդը հերոսաբար լուծեց այդ պատմական խնդիրը, կարողացավ ջախջախել թուրքական զորքերին և զենքով ձեռք բերել իր սեփական Հայրենիքում ապրելու, գոյատևելու ու զարգանալու իրավունքը։ Չլիներն այդ պատմական հաղթանակները հայ ժողովուրդը կկորցներ իր Հայրենիքի վերջին անկյունը՝ Արևելյան Հայաստանը, ժողովրդի մի մասը ցեղասպանության կենթարկվեր, մյուս մասը՝ կհեռանար օտար երկրներ։ Արևելյան Հայաստանը և արևելահայությունը կարժանանային այն դաժան ճակատագրին, որին արժանացան Արևմտյան Հայաստանը և արևմտահայությունը։ Արևելյան Հայաստանը հայաթափ կլիներ, այն կբնակեցվեր թուրքերով, ադրբեջանցիներով և քրդերով։

2. Մայիսյան հերոսական ճակատամարտերով ազատագրվեց Արևելյան Հայաստանը, մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Անկախ Հանրապետությունը։ Ավելի քան 600 տարվա ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց անկախ պետականությունը, որը ժողովրդի գոյապահպանման ու զարգացման հիմնական պայմանն է։

Մայիսյան հերոսամարտերը և մայիսի 28-ը նշանավորեցին պետականության կորուստից հետո մղված ազատագրական դարավոր պայքարի հաղթանակը՝ հայոց պետականության վերածնունդը։

3. 1918 թվականին հայերը թուրքերի դեմ ժողովրդական պատերազմ էին մղում, որին մասնակցում էր ամբողջ հայ ժողովուրդը։ Թուրքական զորքերը Արևելյան Հայաստան էին ներխուժել ամբողջ հայությանը ոչնչացնելու նպատակով և հայ ժողովուրդն էլ կռվի ելավ ամբողջությամբ՝ մեծից մինչև փոքրը, իր բոլոր կուսակցություններով և դասակարգերով։ Հաղթահարվեց կուսակցական, դասակարգային, քաղաքական, հատվածային պառակտվածությունը, որը նախորդ շրջաններում երբեմն բախտորոշ վնասներ էր հասցրել ազատագրական շարժմանը։

1918 թվականի մայիսին հաղթեց ազգային միասնության գաղափարը, հաղթեց ժողովրդի գոյապահպանման հիմնական գործոնը՝ ինքնապահպանման բնազդը։

4. Թուրքերը, քրդերը և չերքեզները դարեր շարունակ և ոչ առանց հաջողության, հայերի մեջ արմատավորում էին պարտվողականության, ստրուկի և զոհի բարդույթը։ Եվ դա ցավոք աստիճանաբար դառնում էր ազգային բնավորության գիծ։

1918 թվականի Մայիսյան հերոսամարտերում հաղթահարվեց այդ չարափաղանց վտանգավոր բարդույթը։ Հայ ժողովրդի մեջ վերազարթնեց իր նախնիների քաջարի ոգին, հայ ժողովուրդը հավատաց իր ուժերին, իր հաղթա-

նակին, իր ապագային, որ չի պատկանում կործանված ազգերին և դալիք դարերում առաքելություն ունի իրագործելու։

5 Մայիսյան հերոսամարտերով և Հայաստանի Հանրապետության հռչակմամբ հայ ժողովուրդը բևեռեց իր պատմության նորագույն շրջանը՝ դույց տալով աշխարհին, որ չի կորցրել հոգու կորովը և պատրաստ է նորագույն շրջանում ևս ղենքը ձեռքին ապահովելու Հայրենիքի անկախությունը, ապրելու և զարգանալու իրավունքը։ Այդ դրությունը հայ ժողովուրդը փայլուն կերպով ապացուցեց Ղարաբաղյան շարժման տարիներին դրսևորած ազգային-ազատագրական հերոսական պայքարով։

6. Հայաստանի Առաջին Հանրապետությունը հիմք հանդիսացավ Խորհրդային Միության կազմում Հայաստանի՝ որպես միութենական հանրապետություն գոյության համար։ Միութենական հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանում, հետագա տասնամյակներում բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հայության կոնսոլիդացիայի, ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության, կրթական համակարգի թռիչքաձև զարգացման համար, առանց որի 1991 թվականին բացառվում էր Հայաստանի Անկախ Հանրապետության հռչակումը։

1921 թ. հուլիսի 2—3-ը Թիֆլիսում տեղի է ունենում Ռկկ Կովկասյան բյուրոյի պլենումը Ստալինի մասնակցությամբ, որը քննարկում էր այն հարցը, թե ի՞նչ իմաստով պետք է հասկանալ անդրկովկասյան հանրապետությունների անկախության կարգավիճակը։ Ստալինը պլենումում հայտնեց, որ ազգությունների համար նախատեսվում է ավտոնոմիաների չորս աստիճան։ ա) ադմինիստրատիվ ավտոնոմիա, բ) ավտոնոմ հանրապետություններ, գ) պայմանագրային հանրապետություններ, դ) լրիվ անկախ հանրապետություններ։ Ի տարբերություն մյուս ավտոնոմիաների, ասաց Ստալինը, Անդրկովկասի երեք հանրապետությունները՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը պետք է պետական անկախության լրիվ ստատուս ունենան։ Այդ հանգամանքը Ստալինը բացատրեց հետևյալ կերպ. «Այդ երեք հանրապետությունները մնացածներից տարբերվում են նրանով, որ ազգային կառավարությունների երեքամյա գոյությունը դրել է իր որոշակի կնիքը, դաստիարակության հետքերը մնացել են և խորհրդայնացմամբ հնարավոր չէ դրանք միանգամից վերացնել. այդ պատճառով էլ ճարկադրված ենք գնալ զարտուղի ճանապարհներով։ Դրանով նրանք արմատապես տարբերվում են մնացած հանրապետություններից»։

Այս որոշումը ընդունելիս Ռուսաստանի ղեկավարությունը հիմք էր ընդունել հետևյալ երկու նկատառումները.

ա) Անկախ հանրապետությունների շուրջ երեքամյա գոյությունից հետո Անդրկովկասի երեք հանրապետությունների ժողովուրդների համար անհասկանալի կլիներ անկախ պետականությունից զրկվելը։

բ) Ուժեղ նացիոնալիզմի առկայությունը, որը կարող էր անցանկալի հակաբոլշևիկյան շարժումներ առաջացնել Անդրկովկասի հանրապետություններում։

Այսպիսով, չլիներ Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ չէր լինի միութենական հանրապետություն Խորհրդային Հայաստանը, չլիներ միութենական հանրապետություն Խորհրդային Հայաստանը՝ ԽՍՀՄ փլուզումից հետո չէր լինի 1991 թվականին հռչակված Հայաստանի Անկախ Հանրապետությունը։

7. Եվ վերջապես վերջին հարցը։

Ի վերջո, հայ ժողովուրդը 1920 թ. կորցրեց իր անկախ պետականությունը։ Այսօր նշելով այդ պատմական իրադարձությունների 80-ամյակը, մենք պարտավոր ենք որոշակիորեն պատասխանելու այն հարցին, թե որն է որոնցից բխող պատմական դասը, պատմության ներկա փուլում ինչպիսի քաղաքականություն պետք է վարի հայ ժողովուրդը, որպեսզի նորից չկորցնի իր նորանկախ պետականությունը։

Հայաստանի Առաջին Հանրապետության կարճատև պատմությունը հաջորդ սերունդներին պատմական դաս թողեց այն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի և հայոց անկախ պետականության գոյատևման երաշխիքը՝ պատմության նորագույն շրջանում ազգային գաղափարախոսության՝ ժամանակի հիմնախնդիրներին համահունչ նոր մոդելի մշակումն է, որում այլ պրոբլեմների հետ միասին իր լուծումը պետք է գտնի հայոց ազգային թշնամու՝ Թուրքիայի և բարեկամ՝ ռուսական պետության ստրատեգիական մրցակցության, իսկ երբեմն էլ մարտավարական բնույթ կրող դաշնակցության պայմաններում՝ հայ ժողովրդի ու պետականության գոյատևման ու զարգացման գիտականորեն հիմնավորված ազգային անվտանգության ծրագիրը՝ նկատի ունենալով ինչպես պանթուրքիզմի ավանդական վտանգը և Ռուսական կայսրության, ճիշտ է ստրատեգիական բարեկամության, բայց ոչ միշտ միանշանակ տակտիկական բնույթ կրող հայամետ քաղաքականությունը։ Հայոց ազգային անվտանգության կոնցեպցիան պետք է մշակվի ինչպես Թուրքերի, այնպես էլ ռուսաց ազգային գաղափարախոսությունների լուրջ ուսումնասիրության հիման վրա, մի խնդիր, որը, ցավոք, մինչև այսօր չի կատարվել։

Հայոց ազգային գաղափարախոսությունը խորհրդային իշխանության տարիներին, կոմունիստական դաղափարախոսության տիրապետության պայմաններում չէր կարող մշակվել։ Ցավոք, 1991 թվականից հետո ևս չմշակվեց։ ՀՀ Նախագահի և ՀՀՇԿ-ի կողմից ազգային դաղափարախոսությունը մերժվեց, այն բնութագրվեց «կեղծ քաղաքական կատեգորիա»։

Հայաստանի Հանրապետության նորընտիր ղեկավարությունը, ելնելով հայ ժողովրդի և պետականության շահերից, պետք է առաջիկայում շուտափույթ կերպով ձեռնամուխ լինի հայոց ազգային դաղափարախոսության, հայոց ազգային անվտանգության կոնցեպցիայի ստեղծմանը, որը նորանկախ հանրապետությանը գերծ կպահի ճակատագրական սխալներից և կապահովի ժողովրդի ու պետականության գոյատևումը գալիք դարերում։

Ահա այս է այն հիմնական դասը, որը պետք է քաղի հայ ժողովուրդը և հայ քաղաքական միտքը 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության պատմության ուսումնասիրությունից։

ГЕРОИЧЕСКИЕ МАЙСКИЕ БОИ 1918 г. И ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ И УРОКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Академик НАН РА ЛЕНДРУШ ХУРШУДЯН

Резюме

В докладе, прочитанном на юбилейной научной сессии Института истории НАН РА 22 мая 1998 г., рассматриваются многие основные вопросы истории армянского народа 1918—1920 гг., как то: какое место занимает первая половина 1918 г. в истории нашего народа; в чем состояла основная цель турецких захватчиков в 1918 г.; почему армянскому народу удалось в этих, казалось бы, безнадежных условиях одержать победу над врагом и почему в сентябре—ноябре 1920 г. 40-тысячная армия Армении потерпела поражение; характер и содержание майских боев 1918 г.; основные причины гибели Республики Армении в 1920 г. Указанные проблемы в докладе обобщаются и интерпретируются в тесной связи с характеристикой основных событий истории армянского народа этого периода.